ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

«ԱԲՀ-ԳՀԽԱՇՁԲ-21/40» ծածկագրով գնանշման հարցումով Աբովյան համայնքի կարիքների համար նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ ձեռք բերելու նպատակով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Աբովյան

27/09/2021 թ.
ժամը 11:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Չոբանյան
Հանձնաժողովի անդամներ՝ Լ. Իսահակյան, Ջ. Սարգսյան, Գ. Խաչատրյան, Լ. Շառաջյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Հ. Մկրտչյան

Պատվիրատուն՝ Աբովյանի համայնքապետարանը, որը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր. 1 հասցեում, ստորև ներկայացնում է «ԱԲՀ-ԳՀԽԱՇՁԲ-21/40» ծածկագրով գնանշման հարցումով գնման ընթացակարգի բացման նիստի մասին համառոտ տեղեկատվություն:

1. «ԱԲՀ-ԳՀԽԱՇՁԲ-21/40» ծածկագրով գնանշման հարցումով ընթացակարգի հայտերի վերագնահատման մասին
(Ա. Չոբանյան)

1.1 Հայտերը բացվել են www.armeps.am կայքի՝ էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգի միջոցով 2021 թվականի սեպտեմբերի 15-ին, ժամը 15:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

2. «ԱԲՀ-ԳՀԽԱՇՁԲ-21/40» ծածկագրով գնման ընթացակարգի հայտեր ներկայացրած մասնակիցների մասին
(Ա. Չոբանյան)

2.1 Ընդունել ի գիտություն, որ սահմանված ժամկետում հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/Հ	Անվանումը
1	«Գեոքարտ» ՍՊԸ
2	«Ռեգուլ» ՍՊԸ
3	«Հազարաշեն» ՍՊԸ
4	«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ
5	«Նյու արտ նախագիծ» ՍՊԸ
6	«Օն Դիզայն» ՍՊԸ
7	Մաստարա ԱԿ

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

3. Տվյալներ մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

(Ա. Զոբանյան)

3.1 Ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

ՀՀ դրամ

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը	Նախահաշվային գին
Չափաբաժին 1՝ Աբովյան համայնքի կարիքների համար 4-րդ միկրոշրջանում զբոսայգու և խաղադաշտի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական աշխատանքներ					
1	«Հազարաշեն» ՍՊԸ	550000	-	550000	1500000
2	Մաստարա ԱԿ	680000	136000	816000	
3	«Ռեգուլ» ՍՊԸ	1125000	-	1125000	
4	«Նյու արտ նախագիծ» ՍՊԸ	1230000	-	1230000	
5	«Օն Դիզայն» ՍՊԸ	1284000	-	1284000	
6	«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ	15000000	-	15000000	
Չափաբաժին 2՝ Աբովյան համայնքի կարիքների համար փողոցների և բակերի ասֆալտի վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական աշխատանքներ					
1	«Գեոքարտ» ՍՊԸ	199000	-	199000	600000
2	«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ	26000000	-	26000000	

*Առաջարկված գինը մասնակիցների կողմից www.armeps.am կայքի միջոցով ներկայացված գինն է:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

4. Տվյալներ բացված հայտերում պահանջվող/պարտադիր/ փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

(Ա. Զոբանյան)

4.1 Մասնակիցների կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթներում առկա է հրավերով պահանջվող բոլոր /պարտադիր/ փաստաթղթերը և դրան համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ.

1.«Գեոքարտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված 1-ի, որում առկա են թերություններ:
2.«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած գնային առաջարկը գերազանցում է նախահաշվային գինը N 1,2 չափաբաժիններով:
3. .«Նյու Արտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած գնային առաջարկը հաստատված չէ էլեկտրոնային ստորագրությամբ:

4.2 Ելնելով վերոգրյալից՝ գնահատող հանձնաժողովը որոշեց՝

- «Գեոքարտ» ՍՊԸ-ին ուղարկել ծանուցում մեկ աշխատանքային օրվա ընթացքում/25.09.2021թ./ շտկել արձանագրված անհամապատասխանությունները
- «Նյու Արտ» ՍՊԸ-ի հայտը մերժել գնային առաջարկը էլեկտրոնային ստորագրված չլինելու հիմքով պայմանավորված
- «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի հայտը մերժել գնային առաջարկը նախահաշվային գինը գերազանցելու հիմքով պայմանավորված:

«Գեոքարտ» ՍՊԸ-ն մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացրել է հավելված 1-ի շտկված տարբերակը:

4.3 Գնահատող հանձնաժողովի կողմից մասնակիցների հայտերը /պարտադիր/ գնահատվել են հետևյալ կերպ.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
«Գեոքարտ» ՍՊԸ	Բավարար
«Ռեգուլ» ՍՊԸ	Բավարար
«Հազարաշեն» ՍՊԸ	Բավարար
«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ	Անբավարար
«Նյու արտ նախագիծ» ՍՊԸ	Անբավարար
«Օն Դիզայն» ՍՊԸ	Բավարար
Մաստարա ԱԿ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

5. Տվյալներ բացված հայտերում պահանջվող/ոչ պարտադիր/ փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին (Ա. Զոբանյան)

5.1 Մասնակիցների կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթներում առկա են հրավերով պահանջվող բոլոր /ոչ պարտադիր/ փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ.

1. «Հազարաշեն» ՍՊԸ-ի կողմից «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշը ապահովող հավելված 3-ը թերի է ներկայացվել:
2. «Մաստարա» ԱԿ-ի կողմից հրավերի 1-ին մասի 2.4 կետի հրավերով սահմանված կարգով ոչ գնային պայմանների չափանիշները հայտով թերի է ներկայացվել:
3. «Ռեգուլ» ՍՊԸ-ի կողմից «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշը ապահովող հավելված 3-ի տեղեկատվությունը չի համապատասխանում ներկայացված մասնագետների որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) տվյալներին, մասնավորապես Արմինե Հակոբյանի որակավորումը հավաստող փաստաթղթերի տվյալները չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին/դիզայներ/,նաև Հայկ Գասպարյանի որակավորումը հավաստող

փաստաթղթերի տվյալները չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին/կոնստրուկտոր/:
4. «Օն Դիզայն» ՍՊԸ-ի կողմից «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշը ապահովող հավելված 3-ի տեղեկատվությունը չի համապատասխանում ներկայացված մասնագետների որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) տվյալներին, մասնավորապես Արմեն Հայրապետյանի որակավորումը հավաստող փաստաթղթերի տվյալները չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին/դիզայներ/:
5.2 Ելնելով վերոգրյալից՝ գնահատող հանձնաժողովը որոշեց հայտը թերի ներկայացրած մասնակիցներին ուղարկել ծանուցում մեկ աշխատանքային օրվա ընթացքում/25.09.2021թ./ շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

«Հազարաշեն» ՍՊԸ-ի, «Մաստարա» ԱԿ-ի, «Ռեգուլ» ՍՊԸ-ի, «Օն Դիզայն» ՍՊԸ-ի կողմից լիարժեք չեն շտկել արձանագրված անհամապատասխանությունները համաձայն հրավերի 2.4 կետի:

5. Ոչ գնային պայմանների գնահատման չափանիշների մասին
(Ա. Զոբանյան)

5.1 Ոչ գնային չափանիշները գնահատող հանձնաժողովի որոշմամբ գնահատվել է հետևյալ կարգով.

Հ/հ	Մասնակցի անվանումը	Գնահատման չափանիշը		
		Մասնագիտական փորձառություն	Աշխատանքային ռեսուրսներ	Ընդամենը
		/առավելագույն միավորը/40/	/առավելագույն միավորը/30/	/առավելագույն միավորը/70/
1	«Գեոքարտ» ՍՊԸ	40	30	70
2	«Ռեգուլ» ՍՊԸ	40	0	40
3	«Հազարաշեն» ՍՊԸ	40	0	40
4	«Օն Դիզայն» ՍՊԸ	40	0	40
5	Մաստարա ԱԿ	0	0	0

5.2 Գնային պայմանը գնահատվել է հետևյալ կարգով/համաձայն հրավերով սահմանված բանաձևի/.

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Գնային պայմանի գնահատականը
		Առավելագույն միավորը/30/
Չափաբաժին 1՝ Աբովյան համայնքի կարիքների համար 4-րդ միկրոշրջանում զբոսայգու և խաղադաշտի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական աշխատանքներ		
1	**«Հազարաշեն» ՍՊԸ**	30
2	**Մաստարա ԱԿ**	24,26
3	**«Ռեգուլ» ՍՊԸ**	14,66

4	«Օն Դիզայն» ՍՊԸ	12,85
Չափաբաժին 2՝ Աբովյան համայնքի կարիքների համար փողոցների և բակերի ասֆալտի վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական աշխատանքներ		
1	«Գեոքարտ» ՍՊԸ	30

5.3 Բավարար գնահատված յուրաքանչյուր մասնակցին տրվող գնահատականը գնահատվել է հետևյալ կարգով /համաձայն հրավերով սահմանված բանաձևի/

Զբաղեցրած տեղ	**Մասնակցի անվանումը**	**Մասնակցին տրված ընդհանուր գնահատականը (ՄԳ)**
		Առավելագույն միավորը/42/
Չափաբաժին 1՝ Աբովյան համայնքի կարիքների համար 4-րդ միկրոշրջանում զբոսայգու և խաղադաշտի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական աշխատանքներ		
1	«Հազարաշեն» ՍՊԸ	33
2	«Ռեգուլ» ՍՊԸ	22,26
3	«Օն Դիզայն» ՍՊԸ	20,99
4	Մաստարա ԱԿ	16,98
Չափաբաժին 2՝ Աբովյան համայնքի կարիքների համար փողոցների և բակերի ասֆալտի վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական աշխատանքներ		
1	«Գեոքարտ» ՍՊԸ	42

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

6. «ԱԲՀ-ԳՀԽԾՁԲ-21/40» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի և պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին
(Ա. Զոբանյան)

6.1 Գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ԱԲՀ-ԳՀԽԾՁԲ-21/40» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից է ճանաչվում N 1 չափաբաժնով «Հազարաշեն» ՍՊԸ -ն և N 2 չափաբաժնով «Գեոքարտ» ՍՊԸ-ն , որպես ամենաբարձր գնահատական (ՄԳ) ստացած մասնակից:

6.2 Անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակիցներին կներկայացվի Աբովյան համայնքի կարիքների համար նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական աշխատանքների ձեռքբերման պայմանագիր կնքելու առաջարկ:

6.3 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

Հանձնաժողովի նախագահ՝		Ա. Չոբանյան
Անդամներ՝		Ջ. Սարգսյան
		Լ. Իսահակյան
		Լ. Շառաջյան
		Գ. Խաչատրյան
Համակարգող		Հ. Մկրտչյան